



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունիս, 2019 թվականի № 32-Լ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԸ ԵՎ ՍՍԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի հունիսի 20-ի N 01/3-3/10427-2019 գրությունը և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով՝ Հանրային հեռուստատեսության ընկերության խորհուրդը ո թ ո շ ու մ է.

1. Հաշվի առնելով, որ 2018 թվականի գործունեության արդյունքում Ընկերության շահութաբաժնի հաշվարկման բազան կազմում է 48.4 հազ. ՀՀ դրամ վնաս, սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժին չի առաջանում:
2. Հաշվի առնելով, որ 2018 թվականի գործունեության արդյունքում Ընկերության գուտ վնասը կազմել է 48.4 հազ. ՀՀ դրամ, և Ընկերությունը գտնվում է լուծարման գործընթացում, Ընկերության համար գուտ շահույթի բաշխման ուղղություններ չսահմանել:
3. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

27 հունիս, 2019 թվականի
ք. Երևան